

ՔՐՈՆԻԿԱԿԱՆ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Քրոնիկական 10 թր.
 Վեցամսեայ 5 »
 Իրատեսակի համար Տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 Սկզբիկայի համար Տարեկան 2.50 ռ. ղ.
 Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼԻ

Մանուցումն տղր առաջին երևալն համար 40 սակսիւն է. իսկ վերջին երեսի համար 20 սակսիւն է. երկրորդ տեսիւնը անգամներու համար 20 Օլօ գեղջ կրնայ:

ՇԱՐՋՈՒՄ

Պատկախ է
 Խմբագրութիւնը
 Կաթին 45
 A 4
 Редакция на ввстни
 «Шаржумъ»
 Варна.
 du journal
 7m
 (Autriche) Mechitaristengasse W. 4 (Bulgarie) Vienne

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԻ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ
 Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՄԻ ՆՈՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի հայ մամուլը ներկայումս զբաղված է հայ ժողովուրդի համար բոլորովին մի նոր հարցով. Այդ հարցն է կնոջ եկեղեցու բեմից խօսելը:

Կանանց խօսելու իրաւունքը պաշտպանում է «Հայրենիք» թերթը, իսկ դիմադրում է «Տիգրիս»ը:

Մենք հաւատում ենք որ «Տիգրիս»ը զեկապարդները անկեղծօրէն համոզված են թէ այդ նորութիւնը հայերիս համար անկարգ է, թերեւս և ֆլասակար:

Մի անգամից դժուար է հաշտվել այդքան ազատութիւն տալ հայ կնոջը, որը ոչ միայն զուրկ է եղել հրապարակաւ խօսելու իրաւունքից այլ և ընտանեկան հարկի տակ ազատ չէ եղել. եւս առաւել դժուար է այն մարդկանց համար, որոնց համար ինչ որ հնաւանդ չէ կամ ազգային՝ անկարգ է կամ ֆլասակար:

Ամէն մի նոր գաղափար, որը արմատականապէս հակառակ է զարեւոյ սովորութիւնների և աշխարհայեցողութիւնների, իր երեւման առաջին վայրկեանում հետուի չը տեսնող ամբարձիւն սարսափեցնում, շուտով անհաւատ է և հանդիպում ամենազօրեղ, շատ անգամ ըստ երեւոյթի անյալութիւնի, դիմադրութեան: Այսուամենայնիւ եթէ նոր գաղափարի իրականանալու համար կեանքի մէջ հող կայ, այդ զօրեղ դիմադրութիւնը հետզհետէ թուլանում է, պահպանողական պատանէջը ճեղքվում է և գաղափարը ներս է սահում կեանքի մէջ:

Եւ մենք կարծում ենք, որ շատ հեռու չէ այն ժամանակը, երբ հայը առանց զարմանալու և վրդովվելու սիրով կերթայ լուսնու հայ քարոզչուհուն. թէև այսօր այդ նորութիւնը շատ ասորիինակ և անմատչելի է թուում:

Եկեղեցին ժողովրդի բարոյա-

կանը բարձրացնելու համար ստեղծված մի հիմնարկութիւն է. եւ ով որ լաւ բարոյական դասեր կը տայ նրա բեմի վրայից, նա ամենալաւ եկեղեցական պաշտօնեան է: Ի հարկ է մենք չենք կարող ուրանալ որ հայ շատ բարոյական և շատ խելացի կիներ կան և ապագայում աւելի շատ կը լինեն: Եթէ կան և կը լինեն, ուրեք և կարող են եկեղեցու բեմից ժողովրդի հետ խօսել և նրան ուսուցանել, ինչպէս կարողանում են գալոցներում պաշտօն վարել: Եւ այդ մեր եկեղեցու ոգուն բոլորովին հակառակ չի լինի:

Մեր եկեղեցին թոյլատրում է կին հոգեւորականութիւն ունենալ. մենք ունենք կուսանաց վանքեր, ունենք կոյս սարկաւազներ, ունենք եկեղեցական երգչուհիներ: Այսքանը թոյլատրելուց յետոյ ինչո՞ւ պէտք է հակառակել կին քարոզչուհի ունենալուն, եթէ իսկապէս կան արժանաւոր քարոզչուհիներ:

Ձէ, հակառակողը ոչ եկեղեցին է և ոչ էլ նրա ոգին. այլ մեր դարեւոր նախապաշարմունքը. իսկ ինչ որ նախապաշարմունք է, մանաւանդ մարդկային միտքը և իրաւունքը կաշկանդող ու կապտող նախապաշարմունք, նա չի գիմանայ կեանքի յառաջադիմական հոսանքին, և կը խորտակվի:

ՄԵՐ ԹՈՒՔԸ

Կը թ.քնենք բոլոր այն վատ հողիներու վրայ, որոնք իրենց գոյութեամբն պատուհաս կրնան համարուիլ դժբախտ ու տարագիր հայուն համար:

Կը թ.քնենք բոլոր այն ձրիակեր, ծոյլ և անպիտան խաւարի զաւակներուն կոյտին վրայ, որոնք իրատաւ ժողովրդեան ցաւը կը համարուին, և որոնք, ցաւ է ըսել, գարեբէ ի վեր անոր ծոցը սողոսկած օրն ի բուն կը խայթեն ու կը խաթարեն զայն:

«Սիրեցէք զմիմեանս, զի Աստուած սէր է» քարոզող կեղծարարներ, ինչո՞ւ ձեր ցուկն ու մտքը ներս քաշած մութին մէջ կը խանջէք. թողէք ձեր սրջերը, հրապարակ ելէք ու չափեցէք ժողովրդեան վէրքի խորութիւնը, գէթ անոր պահանջին մէկ հարիւրերորդին չափ դարձան տարէք: Նախ դուք գործնականապէս սիւքեցէք և ապա վարժեցուցէք ձեր ժողովրդեան որ սիրէ իր դրսեցի եղբորը, որպէս զի կարելի լինի ջնջել «Գրսեցի» և «Ներսիսի» պժգալի խնդիրը:

Կը թ.քնենք այն ամէն անկարգիր երիտասարդներու երեսին որոնք անխել իրենց մերթ «այո՛», մերթ «ո՛չ» լիտք քոցազանչութիւններով ժողովուրդը կանխարոյականացնեն, և անոր բարի արամադրութիւններն ի շարն կը գործածեն «յիշուի, չը յիշուի» խնդրով: Ձայնը, զգուշացէք արիւնտաւել հայ ժողովրդեան սպիտակ վէրքերն, և մինչև իսկ հեռացէք անսով, ցորչափ անկարող էք զայն կրթել և բաշտարցնել:

Կը թ.քնենք անդրժողովրդեան բրածոյներու ներկայացուցիչներուն երեսին, որոնք իրենց նման «սրկիայ Օրմանեանի» անունը պատրուակ բռնելով «տեղացի» և «գրսեցի» միջև խրամատ մը կը բանան, կարծելով թէ այսպիսով հնար կը լինի անձեռնմխելի պահել գալոցական և եկեղեցական խնդիրներն նորեկ հայերուն հանդէպ: Համոզուեցէք և քաջ համոզուեցէք, ո՞վ պղտիկ և աղքատ հոգեներ, համերաշխ գործակցութիւնն է, որ մեզ կարող պիտի լինի փրկել մեր վրայ տիրող սամիկ աղիտութենէն: Ո՞վ լուսամիտ կարծեցեալ պարոններ, ո՞ր էք, ի՞նչու չէք կարկառեք ձեր ձեռքերը մէկգլխու և քաջաբար պատուել խաւարի վարագոյրը, քանի որ պատօնական անտարբերութեամբ կը գիտէք այս ամէնը, իրաւունք կուսնենք ձեզ վիժուկներ անուանել:

Կը թ.քնենք արգահատելով այն ամէն սնամէջ գանկերուն վրայ

որոնք «յիշուի չը յիշուի» խնդրոյ մը համար, ի նորոյ «մտտուռ» կամ «տաճար» կանգնելու գաղափարն կարծարծեն, իրենց յենակ ունենալով իրբւ թէ ժողովրդեան ասմիկ կրօնասիրութիւնը:

«Թողէ՛ք մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց» մեր ունեցած ժամերն ու տաճարներն շատ են իսկ, անբարեկարգ և սղորմելի դպրոցներու վրայ խորհիւք, որոց մէջ կը խամրին օրն ի բուն մեր մատաղ նոր սերունդը:

Սթափեցէ՛ք, սթափեցէ՛ք ով դիւթալներ, քիչ մըն ալ ժողովրդեան վրայ խորհեցէք ու ձեր լոմլոմած բառերուն իմաստն հասկըցէք, տեսէք ձեր վարդապետն ի՞նչ կընէ «ձայն զազմաց, ձայն Աստուծոյ է»: Ի՞նչու կը հեգնէք դուք զայն լկախաբար, և տեղի կուտաք ժողովրդեան գրգռման ու երկպառակութեան: Ահա այսօր ժողովրդեան յոյժ մեծամասնութիւնն է որ «չը յիշուի» կը գոչէ, և դուք տակաւին կուղէք անսու, ձեր քմահաճոյքներուն: Ամօթ և նախատինք է ձեզ, գնացէ՛ք, կորսուեցէք ո՞վ խաւարի զուակներ, դուք մեր թուքին ու մուրին ալ արժանի չէք:

ՀԱՅԸ

Բուսշուք. 25 Օգոստոս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 27 Օգոստոս

Նախորդ նամակէս ի վեր մեր վիճակը փոխուած չէ: Գահակալութիւնէն առաջ ձեր բակալուածներէն մէկ քանիները արձակուեցան, բայց դեռ հարիւրաւորներ բանան են ու ատոնց համար Պատրիարքը ոչ մէկ բան ընելու կարող է:

Ոտականութեան դուռը շրջեալ են գարձեալ այրեր և կիներ՝ բանտարկեալներու պարագաները, որոնք Պատրիարքէն յոյսերնին կարած՝ Տէր Մինասեան Վահան վրդ.ի և Օհանեան տէր Ոսկի քահանային միջոցաւ գործքալեցնելու ճարը կը նային:

Եւ բոսպլէն նոր վերագործող թիւրեան և թագսրեան բժիշկ-

նեքն ալ զեւ բանան են և ասանցմէ զաս կան բազմաթիւ թիւրքեր որոնք հայերուն բազմակից եղած են և հաւասարապէս կը գեղերին բանտին խոնաւ կամարներուն ներքեւ :

Հոս կարեւոր շրջանակներու մէջ կը խօսուի և կրնանք բնել որ հաստատի աղբիւրներէ բլխած է թէ՛ Լահէյի Օսմ. պատուիրակներն ալ պաշտօնապէս հաղորդեր են թէ «բէֆօրմի» խնդրին համար թուրքերը և հայերը միացած են և միասին պիտի գործեն :

Այս լուրը ահաբեկած է ամէնքը և ներկայ ժամանակի խստութիւնները անոր արգելները կը կարծուի :

Գաւառներէ եկած լուրերը շատ աւելի ցատալի են . վաճառականութիւնը բոլորովին հայերու ձեռքէն կելլէ , որովհետեւ նայնիս 10 երաշխատոր , ուղիւն չի թոյլատրուիր Պոլիս գալ , մինչդեռ յայները , հրեայները և թուրքերը աղատ կերթեակներու վտանգ մասին ալ Օրմանեան ոչ մէկ բան կընէ , ընդհակառակը կը շարունակէ իր պառայանները :

Անցեալ կիրակի Գարթալ գաւառէն պատարագելու պատրուակա , անկից ալ Եղաճըզ գաղեր է զբռնելու երբ որ մը առաջ հեռագրու կը հաղորդուէր իրեն Հաճընի հրդեհին լուրը և հրկիզելոց արտուր վիճակը :

Երէկ Գուշա-Տէտէի բարձունքները , նախընթաց օրը Չամլըճա և այսօր ալ Եղաճըզ , ահա Կ. Պոլսոյ Ամենապատիւ Տ. Տ. Մաղաքիա Սրբազան Արքեպիսկոպոս Օրմանեան ազգախնամ Պատրիարքին զբաղումները !!! :

Հրճուեցէք դուք , Պատրիարքի պաշտպաններ , անոր շափ աղբուրաց և վնասակար տարրեր . հրճուեցէք թէ Պատրիարքի իր ազգին ցաւերը կը պարմանէ

լեռնէ լեռ «զէվքի» պտտելով և իր չլենալիք և պայթիւնք փորը պարարտացնելով :

«Անհի» դրած էր «Պատրիարք մը որ կը զբոսնու» , բայց ինչի՞ հետ , մոռցուած էր ասի . Պատրիարք մը որ կը զբոսնու . . . ազգին թշուառութեան հետ , անոր ճակատագրին հետ :

Մէկ քանի օր առաջ Պատրիարքարան հասաւ եղիպտացոց զանգատագիրը , որուն մէջ իրաւացի բողոքներ կային Օրմանեանի գէմ : Ինքը այս և այս կարգի գանգատագիրներէ , որոնք ամէն կողմէ մը շա կը թափին ի Պատրիարքարան , զգածուելու , հրաժարելու և կամ պէտքերուն դարման մը խորհելու անց կելլէ Եղաճըզները կերթալ և ապացուցանելու համար թէ ինքը ո՛չ Աստուծոյ կը վախնայ և ոչ ալ մարդոցմէ կամչնայ չի քաշուիր ինքը : Կաթողիկոսական քանտիտա իսկ առաջարկել Ասոյ թառին համար :

Օրմանեան կը կարծէ թէ Կիլիկիոյ կաթողիկոս ընտրուելով պիտի կրնայ պահել նաեւ Պոլսոյ Պատրիարքութիւնը և այսպէս հոս կամ հոն իր վիճակը ապահոված պիտի ըլլայ . բայց Մամբրէնները և Թիւթիւնիէֆները պատմող սերունդը մեռած է արդեօք . . . :

Ամէն հայ որ զգացում մը ունի սրտին մէջ , պէտք է սոսկայ այս խորհրտայ , անխիղճ և ստախոս մարդէն , ո՛ւր կը մնայ զայն Կիլիկիոյ աթոռին վրայ բարձրացնել , Պոլսոյ մէջ ամէն եկեղեցական և աշխարհական ազգասէրներու նուիրանքը շահած է , մանաւանդ Ալեքսանդրի մահէն ի վեր , քանի որ ամէնքը գիտեն թէ Օրմանեանի զոհն էր այն :

Գուրդեւ չէ զրկած Խաչայեան Սահակ եպիսկոպոսի Ատանա երթալու հրամանագիրը . ե՞րբ

կամ ի՞նչ կերպով պիտի զրկեն , չգիտենք : Առայժմ ընտրելիներու վրայ կը խօսուի . մէկը Բարթողիմէոս մօլլան է որուն վրայ զրկելը չարտեք որովհետեւ չկայ մէկը որ զինքը չը ճանչնայ , միւսը Ալըքեան շէյխն է , Բարթողիմէոսի նման հանրաճանօթ և ամէնուն . . . ատելի :

Երրորդն է՝ Մեսրոպ եպիսկոպոսը որուն վրայ ո և է արժանիք չկայ և Ալըքեանէն ու Բարթողիմէոսէն վար չմնար : Ինչ որ ցատալի է , սա է թէ այս երեքին մէջ եկած մտած է նաեւ Մելքիսեդեկ եպիսկոպոսի անունը :

Իշմիրի առաջնորդին արժանիքին գէմ գիտողութիւն ընող չկայ , բայց իր օրով կը վախցուի որ Սիւր բոլորովին կը բաժնուի Էջմիածնէն և Պոլսոյ հետ միանալով մեծ ուժ մը կը կազմեն մայր աթոռին գէմ և այսպէս հոգեւոր միակ գերագոյն իշխանութեան ազգեցութիւնը կը սկստանայ . ինչ որ մեր ազգի արդի վիճակին մէջ քնտաւար է :

Այսպէս մտածելուն կամ կարծելուն պատճառը սա է որ Մելքիսեդեկ Սրբազան առեւտրութիւն կը տածէ Ռուսիոյ գէմ անոր ըրած ոտնձգութիւններուն համար հայ եկեղեցոյ գէմ :

Այս պատճառաւ Մելքիսեդեկ Սրբազան պիտի ուզէ զօրացնել և բարձրացնել Սոյ աթոռին արժանիքը Էջմիածինը կոտրելու համար . և ասի պարզապէս Ռուսիոյ քիթը կոտրած ըլլալու համար . . . :

Այս չորս ընտրելիներէն զատ կան գեւա երուսաղէմացի ընտրելիները և շատ հաւանական է որ անոնցմէ մին ընտրուի իբր կաթողիկոս Կիլիկիոյ :

Եթէ մեր կարծիքը իրականանայ և Օրմանեան կաթողիկոս չընտրուի , ալ ո՞վ գիտէ բարկութեան ինչե՞ր պիտի ընէ : Ար-

գէն հիմա իսկ կըսէ թէ «Պոլսոյ մէջ ինձ չպելու մարդ չկայ» ու այս մտածելով է որ ոչ օրուան պէտքերուն հոգ կը տանի և ոչ ալ կարեկցութեան հիւլէ մը ունի իր մէջը :

Խառն ժողովի անգամները հիմա օձիկ կը թաթուեն իրմէ . իրենք որ անոր աջակիցն էին և որոնք վերջապէս հասկցան թէ որո՞ւ հետ է գործելիին :

ՄԺՂՈՒԿ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

Վերնագիրս թող պարմանք չի պատճառէ ընթերցող հայուն , վառն զի վատերէն ամէն բան սպասել կարելի է . ուստի գիտնալ վերնագիրս հաստատոյ իրականութեան :

Երկու շաբաթ առաջ ընկերներէ մին Եստի , նամակ մը ստացաւ Հալէպէն որով կը գրէին .

«Եզրիպտոսէն մի կուսակցամու նորակազմ հնչակեան , Գ. Կ. ստորագրութեամբ կը գրէ Կիլիկիա թէ՛ գաղնակցական կուսակցութեան գործիչներ եկած են հոս . . . (այսինչ ձեւի սակ) . առտնք մեր հակառակորդներէն են , ուստի անմիջապէս կամ սպառնալիքով դուրս հանեցէք և կամ ուղղակի կոտորվարութեան յանձնեցէք : Բայց աւելի վատն այն է որ այդ վճիռը արձակուած է գատարկապարտ կեդրոնի մը ժողովի մէջ , ու այնպէս գրուած . այսօր այդ նամակները բռնուած են . . . կոտորվարութեան ձեռքն է : (Չը կասւածինք թէ բռնուելու դիտաւորութեամբ գրկուած է . . .) , և ամբողջ Կիլիկիան կրակի մէջ է , ու բոպէ առ բոպէ կսպասէ իր օրհասին . համարիէները լեցուած պաշարած են , բարձրագոյն հրամանի մը կսպասեն :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱՄՈՒԸ
ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԽԵՂՃ ՀԱՅԵՐ

«Թագաւորներու պատմութիւնը՝ ազգերու մարտիրոսական պատմութիւնն է» . ըսաւ Բ. Ժ. Բրիւսօն :

Ոչինչ աւելի արդար , ոչինչ աւելի իրաւացի :

Ապտիւլ-Համիտի , այս թագակիր մարդասպանին , ինչպէս կոչեց զայն Կլատսթոն , թագաւորութեան պատմութիւնը՝ Հայ ազգին ճշմարիտ մարտիրոսական պատմութիւնն է :

Եւ ի՞նչ մարտիրոսութիւն Պատմութեան եւ ոչ մէկ թուականին այսպիսի անաթօթութեան մը նմանը չզանուիր , և ոչ իսկ ձինկիլ խանի կամ Թէմուրլէնկի ժամանակ .

որոնք մարդկային գլուխներէ բուրգեր կը կանգնէին :

Այս թշուառներէն երեք հարիւր հազար՝ առանց սարիքի և սեփ խարութեան՝ արեւմտքու Սոլթանի հրոսակներէն ստանաբառութեամբ խողովորուեցան :

Չոհերու հեծեմանքը համայն աշխարհի մէջ լսուեցաւ , և աշխարհը հանդարտ ու անտարբեր մնաց :

Իրենց արիւնք Օսմանեան կայսրութիւնը ողողելով՝ ամէն քաղաքակիրթ կոչուած մեծ տէրութեանց վրայ ցայտեց , որոնք անձնական հաշիւներէ եւ շահերէ զրգուած վատաբար քաջալերեցին և թողին որ ի գլուխ հանեն ազգի մը այս սպաննութեան գործը :

Կոտորածէն ազատած հայերը , վերջիս Լահէի խորհրդէն յոսալու միամտութիւնը ունեցան :

Հեղնաբար խաղաղութեան համար կոչուած խորհրդին անգամներն ալ «Յիւրազ-Քէօզիլի քարայրին մէջ պահուած գողանին բարեկամներու արժանաւոր ներկայացուցիչներն ըլլալով . անտես ըրին հայերը . ու հիմա

անոնք ցիրուցան եղած ամէն կողմէն աղերսագին ձեռքերին կը կարկանդակուէին : Ոչ այլեւս տէրութեանց , որոնք զիրենք լքին և մասնեցին , այլ իրենց բշտաւորեան և զարոց մասնակից եղբայր , հարստահարեալ ժողովուրդներու . անա իրենց մեկ անխաւարտներ :

Բայց՝ այս ազգաց հաւակրութիւնը չկրնար բաւականութիւն տալ իրենց . զինքնաբեր չընէր իրենց դահիճը , ու անկարող պիտի ըլլայ կասեցնել վերջին ոճիրը՝ միահամուռ և ակամայ տեղափոխութիւնը կրէալ :

Արեւուն գէմ . քաղաքակիրթ մարդկութեան առջիկ կազմակերպուած կոտորածներու , բնակավայրերու թալանի եւ զազանական ամէն տեսակ անգթութիւններու ենթարկուելի յետոյ՝ հայրենի հողէն տարագրելու , մեղապարտներու պէս հեռու տեղեր փոխադրելու սպառնալիք եղած է :

Սոլթանը , Գերմանիոյ կայսեր մտերիմ եղբայրը , Անգլիոյ , Ռուսիոյ , Գաղիոյ , Իտալիայի եւ Աւստրիայի պաշտպանեալը չուզելով վերջնական

կոտորածի մը համար նորէն քերտակ և պաշիւ-պօղուզներ գործածել . իբր քաղաքական անձնաւորութիւն ուղից քաղաքակիրթեալ պաշտօնակցաց արժանի ըլլալ . այս սեղափոխումը Գաղիական հանրապետութեան գաղնակից նիքոլա Բ. ի առաջարկեց . և նա հաւանեցաւ . թէեւ կոտորածին ալ հակառակ չի պիտի ըլլար :

Արդեօք Եւրոպա պիտի թողու որ կատարուի այս վերջին խայտառակութիւնը . . . :

Եւ ինչո՞ւ համար չէ . նա աւելի մեծերն իսկ թողուց . և ոչ թէ միայն հայոց խողովորուած , այլ նաեւ գլեցազն Կրէտացոց ուղափոխութիւնը , որ իրենց յաւիտեանական թշնամոյն գէմ կը կոռուէին . Յինլանտիոյ նուաճումն և Անգլիոյ մի մասին , իսկ իր լատալի արտօքմական անգթութեամբ ջնջուիլը :

Մեր դարը բոլորովին գրամի , հաշուոյ եւ ծուլութեան դար է : Արդարութիւնը , մարդասիրութիւնը , քաջութիւնը ունայն խօսքեր եւ մեռած ստոեր են . և երբեք զի-

Կրիկիկային հասկցած է ատոնյ ըրտական մակարագիր . սն զգուանք մը միայն ունի զէջայ յոյ կեզտտոնեբը , ու չուչեր նոյնիակ ատոնյ անուներ սալ : Բայց մեր ձրի ազգասէրները և վարձեալ դատաւանները , չեն դադրիր իրենց շահատակութիւնեբը ընելէ : Այս առթիւ գրելիքներ շատ կան , բայց ես զգուանք մը կըզամ գրեյու . երանի թէ առկից չէի եզեր ու անձամբ սեղեկացեր այս բուրբ . շուտով մեկնելու եմ ասկից և այլն :

Այս նամակի ըսածներուն վրայ դեռ որոշ համոզում մը չէինք ունեցած , երբ վրայ հասաւ օգոստոս 19ի երեկոյեան նորակազմ հնչակեաններու հրապարակային ժողովը : Ժողովարահը լեցուած էին բաւական թուով հայեր , առաջին առեւտրոսն Եղա Պ . Ասլան Ալմասեանը , որ պատմեց Կրիկիկոյ ժողովուրդին եռանդը , ինչպէս հնչակեան ըլլալը , և ատոնցմէ ալ խարուիլը ու նորակազմեան դառնալը . և աւելցուց «Կրիկիկայի յեզափոխականները (մարտականները) իրենց որոշ ծրագիրը ունին որ պիտի գործեն խոհեմ ու լուրջ կերպով : Անոնք իրենց ծրագրին հակառակ բան չեն ընդունիր , և իրենցմէ տարբեր խաբողները չեն թողուր որ հոն մուտք գրանեն : Ամիսներ առաջ յեզափոխական կուսակցութիւն մը (ակնարկելով դաշնակցութիւնը) առաջարկեց զէնք , դրամ և մարդ զրկել , սակայն անոնք մերժեցին ըսելով թէ մենք ձեր զէնքը և դրամը չենք ուզեր , ու չըլլայ թէ մարդ զրկէք , հակառակ պարագային եթէ ձեր կողմէն որիէ մարդ երեւնայ այստեղ , նախ լուր կուտանք որ դուրս ելնէ , եթէ չի հեռացաւ , կամ կսպանենք կամ կառավարութեան կը յանձնենք : — Ու աւելցուց ատե-

նախօրը—ինչպէս արդէն ըրին անցեալ տարի 5—6 հատը ըլլանելով գուրս վաճառեցին իրենց երկրէն , որ գազանագուլի մտած էին : Պ . Ասլանը իր այս խօսքերով , ալ կատկած չի թողուց նամակի ճշգրտութեան . ամէն բան պարզ եղաւ , որ « յեզափոխական (.) մարդուկները , վերջապէս . . . իրենց վայել գործին . . . մատնութեան » , սկսած էին . . . Մասնակ . . . դաւաճանել . . . հայ յեզափոխականին տաճիկ կառավարութեան :

Ահա ձեզ « զգու շու թեամբ , խոհեմութեամբ , համբերութեամբ , երկիւղածութեամբ , լուրջութեամբ , շրջահայեցութեամբ , լրջութեամբ , քաղաքագիտութեամբ և ազգասիրութեամբ գործող ազգասէրներու առաջին քայլը : Այս քերտիս լոյս , խմբական կազմակերպուած դաւաճաններ , պաշտօնական մատնութիւններ պակաս էին ան ալ եղաւ . . . ալ երջանիկ ենք . . .

Այն լուրը որ ձեզ հաղորդուած էր թէ Սարաճեան եպիսկոպոս հրահանգ է տուած որ Արսէն վարդապետ Ամերիկա գայ , չիրագործուեցաւ . մեր եպիսկոպոսը յետաձգած է իր օրոշումը : Ո՞վ գիտէ ինչ նպատակաւ :

Փրօփոտէնս , 15 Օգոստոս

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴԻ ՅԵՄԱՏԱԿԻՆ

Մահուան անագործին հրեշտակը քաղց կեանք մը , որ տակաւին իր փթթումին մէջն էր . սեւ հողը ծածկեց կուրծք մը , որ գիրի բայ սիրելի ազգի , թշուառ հայրենիքի համար կը բարբառէ միշտ , որ ազատութեան սիրով հրդեհուած էր : Հայր սուրբը սիրպար եւ անշահախորհր եկեղեցական մըն էր : Իրբեւ Քրիստոսի երգած քաղ ճողիւն՝ անխարդախ սիրով սիրեց նա իր հօտը , անձը ուրացաւ և պաշտելի

գարձաւ իրեններուն : Վերին աստիճանի պարտաւանալ էր նա . 1895ի ցոյցէն ետք զինող աչքեր կը նշմարէին ամէն առաւօտ երկտասարգ վարդապետ մը , որ արիւն քրտինքի մէջ թաղուած արագ արագնասուրբ—Գաբուէն գեղի Գուրգարու կաճապարէր : Ո՞ր կերթար ան . և ինչու ամէն տուտտ այգքան ճոճբան հեփտան : — Հայոց երկար Պատրիարքը իզմիրիւնի փակուած էր . թիւրք զինուորիկէ պաշարուած Պատրիարքարանին մէջ միւնակ . հայ վարկեակերպ լքել էր իր այժմանուր պետը : Այս ծանր կազդեր վաղինակ վրդի քնքոյչ սրտին վրայ : Անոր համար անձանթ էր երկիւղ . պէտք էր երթալ սիրելի իզմիրեանք միւթարէլ . պէտք էր անոր ծառայել իր նեղ օրերուն մէջ , և վաղինակ վրդ ամենայն ճշգրտաճութեամբ կատարեց այդ պարտականութիւնը , առանց սակայն մոռնալու իր խնամքին յանձնուած թաղին ժողովուրդը . երկուսեան ուշ առեւ կը վերադառնար նա իր պաշտօնատեղին , դարձեալ հետիւտան : Ո՞վ գիտէ , նա թեբեւ շատ անգամ չղեկաղքի համար ստակ չէր ունենար , կամ չէր ուզէր երկար ժամանակ սպասել : Իրբեւ ճշմարիտ խայրեմաւոր՝ նա գացած տեղը եռանդ եւ գործունէութիւն կը սփռէր : Իր աշակերտներուն Աւետարանի բարձր սկզբունքներու հետ կը սորվեցնէր նաեւ երգել :

« Ազատութեան այն վառ սէրը թունդ որոտաց իմ սըրտում , իմ հայրենեաց սուրբ անունը ինձ պատերազմ է կանչում » .

Անմեղ երախայի մը պէս կը հրրձուէր երբ իր աշակերտները ուեէ ազգօգուտ ձեռնարկ ներկայացնէին իրեն և կը քաջալերեր զանոնք : Նահատակ Սասունի համար մեր հանքանակած պղտիկ գումարը խոստացաւ ու զգալի իզմիրեանին ձեռքը յանձնել . « Ան իզմիրեան Սրբազանին կը համ , թէ այս գումարը իմ աշակերտներս 10—20 բարայով ժողոված են , ան կուրախանայ և կօրնե՛ք ձեզ » , կրտէր հոգեպան անհուն բերկրանքով մը սիրաբոխի եղած : Երբ 1895ին քաջարի Չէյթուէն ապստամբած հերոսներուն համար վաւորագրին խնդրելու գոցի , անհուն ուրախութեամբ լեցուած , իր բնական զուարթ եղանակով ըսաւ . « Չա-

րաճճի տղայ , չտե՞սար որ ես քսակս ազգ . գանձանակը պարպեցի . « Իսուքը չը լինցուցած ընդմիջեցի » . « հայր սուրբ . դու ինձի սորվեցուցիր որ Գամառ—Գաթիկան գրել , կարգալէ տաջ արիւն վոթել կը պահանջէ , ինչու քիչ մըն ալ ստակ մեր պանծալի Չէյթուէնի քաջերուն համար չպահեցիր » ալ չկրցաւ համբերել , ճակտիս առք համբոյր մը դրոշմեց և մագերս փայտալիով ըսաւ . « հա՛ սիրելիս , ուղիւ կը մտածես , քու վարդապետը քեզ ձեռնունայն չը զրկեր , և Չէյթուէնցիները շատ կը սիրեմ , և անոնց համար ստակ կըստեղծեմ » և արդարեւ ըսածէն ալ աւելի ըրաւ : Անոր խոնարհ և վեհ հոգուն առջեւ մեծ ու պղտիկ , ազգաս ու հարուստ հաւասար ընկերներ էին : Նա Ս . Գրոց երկու երեսն ալ սերտած վարդապետ էր , մեր շատ մը փոսած կղերին պէս միակողմանի չէր մեկնէր Աստուծոյ խօսքը : Ան ներդաշնակ կերպով հաշտեցուցած էր « սկիւ ընդ ական » ի վրէժխնդր՝ և « սիրեցէ՛ք զիշնամիս ձեր » ի հղահամբոյր վարդապետութիւնները իրարու հետ : Կրօնագիտութեան դասին միջոցին հարցուցինք իրեն՝ թէ մեղք է մասնիչի մը արիւնը թափել . պատասխանեց , « ոչ , Աստուծոյ առաջ կենդանի պատարագ մատուցանել է այդ » : Իրբեւ քաջ և ազնիւ յեզափոխակաւն՝ հոգուով ու մարմնով նուիրուած էր Սուրբ գործին :

« Սի՛րտս , սի՛րտս » հառաչելով մարեցար սիրելի վայժապետ : Այն , կը հասկնամ քնքոյչ սրտիս ցաւը , օտար աստղերու սակ . հեռի քու սիրած Հայաստանէն ապրիլ դառն էր քեզի համար . կը հասկնամ փափուկ սրտիդ ցաւը . դուն կուղէիր խուճրի մը գլուխ անցած Հայաստան կուսելու երթալ . Ժիրարներու , Կարօններու , Գուրգեններու պէս կարմիր արիւնով չեղեցի հայրենի հողը , բայց ամսո՛ս չհասար փափաքիդ . գրեմե՛ ռսկորներդ անհանգիստ են օտար հողի մէջ :

Քու աշակերտներու զ համար սուրբ է վերջին կտակդ . մենք կընենք ինչ որ քարոզեցիր , սորվեցուցիր մեզ . և երբ ազատեմք քու սիրած Հայաստանը , այն տանն քու աճիւններդ ալ Ամերիկայէն հոն կը փոխադրենք , որ հանդիսա ննջես , և չիրմիդ քարին վրայ կը գրենք :

անագիտական հաշիւներու մէջ գոյութիւն չեն ունեցած . վասն զի գիւրտականութիւնը կազմուած է նենգութենէ , ստութենէ , վայրենութենէ և վատութենէ :

Ռուսիոյ , Անգղիոյ և Գերմանիոյ շահերը Սուլթանին ապահովութիւնը կը պահանջեն : Ձոհերը նշանակութիւն չունին :

Այս սարնասիրտ հաշուակալներու համար մնացած հայերուն գոհուիլն ինչ նշանակութիւն ունի :

Ռուսիա , Թրքաց դարաւ որ թշնամին , կը պաշտպանէ զանոնք Անգղիոյ և Գերմանիոյ դէմ :

Անգղիա , իր վաճառականութեան յառաջիմութեամբ զբաղած , ստիպուած է կամ տրտնալ Կ . Պօլսոյ , կամ ամէն կարելի միջոց ի գործ գնել արդիւնու ուրիշներու գալն յափրշակելէ : Նա կը պաշտպանէ թուրքը Ռուսիոյ և Գերմանիոյ ցանկութեանց դէմ :

Այս վերջինը իր սպայները և զէնքերը զրկեց Օսմանեան կայսրութիւնը փոքրիկ Յունաստանի դէմ պաշտպանելու համար : Նա , Սուլ-

թանի բարեկամ մը եղաւ , վասն զի թուրքիս , Գերմանիոյ և Ռուսիոյ մէջտեղ , բնականէն կանգնուած ահաւոր պատուար մըն է :

Միւս տէրութիւնները , Աւստրիա և Իտալիա , Գերմանիոյ հետեւն կը քալեն . Գաղիա , Ռուսիոյ հետեւն է :

Այն օրը՝ որ Անգղիա , Ռուսիա և Գերմանիա այս հարստ կողորպուտի բաժանման մասին պիտի համաձայնին . զոր Յոլոր աշխարհ կը ցանկայ , Kosciusko ի զիւցազնական կատաղեղութեան նման պիտի կըրնանք աղաղակել . finis Turquia :

Այսպիսի ցանկութեանց առջեւ թշուառ հայոց իրաւունքը գոյութիւն չունի :

Խայտատակ Ապսիւլ-Համիտ , որ այս ամէնը գիտէ , բոլորն ալ կը ծագրէ , և կընէ ինչ որ ինքը հաճի . իր սճիրնամբողջացնելու համար ներկայ կացութեանն օգուտ կը քաղէ :

Այո՛ , ճիշդ սեղն է գոչելու . « վա՛յ փոքրերուն , վա՛յ սկարնեբուն , վա՛յ յաղթուածներուն » : Ա՛հ , եթէ մեծ և ազնուական

Գաղիան ըլլար ինչ որ էր գար մը առաջ , նոյնիակ յիտուն տարի առաջ կրնար հայոց ըսել . « Յուսացէ՛ք ինձմէ » :

Բայց , աւա՛ղ , նա իր նախկին փառաւոր ասանդութիւնները թողուց . այլիս հարստահարուած ժողովուրդները չպաշտպանէր . նա հարստահարիչներու բանակն անցաւ , շայերու , կրկնացիներու և յոյներու արիան իմեքէն ինքն ալ ունի իր վրայ :

Այս սոսկալի կացութեան մէջ , հայոց ինչ կը մնայ ընել :

Շարժի՛լ կամ անհետանալ . . .

Յուսահատութեան քաջութիւնը՝ հարստահարականներու գործն է :

Լուսագոյն է մեռնիլ առիւծներու նման կուսելով , քան որդերու նման թողուլ զինքը ճմլել կամ ոչխարնեբու նման իողալով :

Ուրիշներու վրայ վատախիլը՝ միամտութիւնը է , հպատակիլը վատութիւն :

Ժողովուրդներն պէտք է վստահին միայն իրենց ուժին , իրենց քաջութեան վրայ , և միմիայն իրենց վրայ :

Պէտք չէ ձեռքերը միացնել պաղատելու համար , այլ պէտք է զանոնք վերցնել զարնելու համար :

Աւելի ազնիւ է յաղթուած վրդ ներկայացնել զահճին , քան թէ դատաւանները շղթային :

Ժողովուրդները միշտ պիտի գրգռուին ժողովուրդի մը պատերազմի ձայնէն , որ վրէժ կը պահանջէ , իսկ կտան սարուկին հեծեմանքն :

Եթէ հայերը , վրէժխնդրութեան ճշմարիտ գոցուումով մեծցած չեն , յուսահատութեան այս բարձր քաջութիւնը չունին , թող հպատակին ոչնչանալու համար , բնդհանրութեան մոռացումն և անարգանքն վայելելով :

« Լա Բրթիթ Ռէբելլիթ »

Գրեց . Ա . իզաւր Չիպրիանի

Թարգմ . Յի Սե

Օգոստ . 15 99 .

«Հաս կը հանդիս վարկնակ վրդ. Ար- սակեան. Հայրենիքի անձնուրաց հարգապաշտակը. ազատութեան գինուրը. ախար հայ եկեղեցու- կանը...»

Առաջին-Մարտի 28 Յուլիս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՎՐՈՒԹՅԱՆ

«Գարժումի 152 թուոյն մէջ ինձ դէմ ուղղեալ նամակ մը կարգացի. իրեն պատասխան «Իրաւունք» 50 թուոյն 16 սո- րագրութեամբ հրատարակեալ նամակի մը, «Թագուր Ֆէրման- եան» ստորագրութեամբ:

Նամակագիր Պարոնն որ ինք- զինք իրեն բարձրագոյն ցոյց կու- տայ, կերելի թէ հայերէն լե- ղուն անձանցի է իրեն, ինչպէս ընթերցողք կարող են գտնել «Իրաւունք» նամակէն և նրա տրուած պատասխանէն: Այս կէտն թողլով, կանցնիմ ինձ դէմ ըրած կոշտ ու կոպտ յար- ձակման մասին առայժմ ու չափս յայտնել թէ, պէտք եղած պա- տասխանն պատրաստ էի (որոյ մէջ յայտնի կերելի իր ցաւն) սակայն ապագային ուրիշ պա- տասխանութեան հանդէպ պա- տասխանատու չմնալու համար տեղույս պատ. հոգարարութեան ներկայացուցի խնդիրն. որ և ինքն յարմար գտնեց. իր կող- մէն արժանաւոր պատասխանն տալ, ուստի մեզ կը մնայ քիչ մը սպասել:

«Գարժումի 151 րդ. թերթին մէջ իմ տուած պատասխանին ընդ դէմ, 154 թիւին մէջ, կա- լացէ ներշնչեալ Պրայիլիսէն Պ. Կշիւ կը պնդէ թէ ինք կատա- րելապէս վստահ է նոյն դէպքին ճշմարտութեան:

Իմ պահանջած այդպիսի խու- սափողական պատասխան չէ. ևս յայտնի ստորագրութեամբ կը հերքեմ. հարկ չկայ ցանկապա- տին ետեւէն պահուրտելով ան- հանգիստ ընել ընթերցողներն. եթէ քով է, վստահ, ինչո՞ւ համար դիմակն վար չառնելով հրապարակ չելլեր իր հաստատ ապացոյցներ երեւան հանելու: Յանուն նահատակ ազգիս հրուէր կը կարգամ համայն ազգայնոց, որ եթէ Պ. Կշիւ և իր համախոհ- ներ ինչ ինչ նկատմամբ կը խնա- յեն ինձ, թող իրենք նախան- ձախնդիր լինին այսպիսի վա- տութեանց ամենախիստ պատիժն տնօրինելու:

Վերջին խօսք. կրկին անգամ ձեր ճակտին կը դրոշմեմ նա- խորգ անակտներու. ձեզ նման- ներու երեսէն բաւական է ազ- գին քաջած առաւպանքներն: Եթէ տարբեր պատասխան մը ընդունիմ, ուրիշ բան մի սպա- սէք ինձմէ, այլ միայն «արհա- մարհոտ լուծիւն»: Թ՛ող տուէք լրագրութիւնն իր նուիրական պարտականութեամբ զբաղի:

Ղևոնդ Բեկ. Փայտագեան

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Էջմիածնի հռչակաւոր Պար- զեանց եպօք. Էջմիածնի ճեմա- րանի նախկին անուշ կոտան- եանի իրեղենները 1000 բոպլիով առած է Էջմիածնի վանքի հա- մար, որոնք շնչին բանք են:

— Կիրակի օգոստոս 29ին, վառնայի հոգարարութիւնը հը- րախրեց Պ. Պոնճուղեանը և ա- ռաջարկեց երկուսն զպրոցներու անօրէնութեան պաշտօնը. Պ. Պոնճուղեան համաձայնած է:

Կը յուսանք թէ նոր տնօրէնը ամէն ճիգ պիտի թափէ ազգային վարժարանը արժանաւոր բարձ- րութեանը վրայ պահելու:

Սուրբ սեպտեմբերի թիւթիւս շարժ օրուան հրատարակած լուրը թէ՛ ուսուցչական խումբը արդէն պատրաստ է. ճիշդ չէր:

— Վանէն «Մշակ»-ի կը գրեն:

Փնջերու տանտնորդական տուր- քերը ծախուած լինեցան են: Կա- ռավարութիւնը քանի մը քրդա- բնակ գաւառներ իրեն պահեց տանտնորդ զինտններու ձեռքով հաւաքել տալու պայմանաւ:

Անձրեւի պակասութեան պատ- ճառա գարնանացանքերը վնաս- տած են: Աշնանացանք և ջրար- բի արտերը շատ լաւ են: Վաս- պուրականի մառանը Արճէշ ու Ալշաւազն են, որոնք այս տարի շատ լաւ են: Կաշերն ոկսած են, երկրագործական պանքան, և օտար կղերները իրենց պաշտօն- եաները զրկած են սեղմերին հաւաքելու: Ռուսական հիւպա- տոս Պ. Մայիլսքի, Կարինէն վե- րագարձաւ և Բայազիտ Իգտիլի ճամբով կովկաս ուղեւորուեցաւ:

— Ռուսուքէն կը գրեն թէ՛ հակառակորդ կուսակցութիւննե- րու մէջ հաշտութիւն կայացած է ազգային հաստատութիւնները եռանդուն կերպով յառաջ տա- նելու համար:

Շատ ուրախ ենք:

— «Մշակ»-ին Մուշէն կը գրեն. Միացեալ ընկերութեան կեդ. վարժարանը դեռ փակուած կը մնայ. ազգայնաց վարժարանին ալ յարատեւելու յոյսը չկայ, որով- հետեւ Միացեալ ընկերութիւնը որ, անուանական գոյութիւն ու- նի միայն, հաղորդած է թէ ու- ռոշուած նպատակ ամբողջովին չի կրնար զրկել, տեղացիներուն առաջարկած է օգնութեան հաս- նիլ: Տեղացի ջոջերը բոլորովին անտարբեր են. առաջնորդական տեղապահի ազգեցութիւնը հե- տըզհետէ կը թուլնայ:

— Ստացանք Կիպրոսի հայ որ- բանոցի և Թարիլու Հայուհեաց Բարեգործական ընկերութեան տեղեկագիրները հաշտեցոյցով հանդերձ:

— Մոսկուայի ժամարեան եղ- բայրները նորէն 10,000 բոպլի նուէր ուղարկած են Պատրիար- քարան հայ որբերու համար:

Իրենց պանքայի 25րդ տարին լրանալու առթիւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Չինտնորական գատախաղը Տրէյ- ֆուսին մեղադրական ճառը ար- տասաներ է և զանի մեղաւոր ճանչցեր է: Հիմա կը մնայ Լա- պորիի պաշտպանողական ճառը: Գոտալճիւրը յայտարարելու օր ոստիկանական խիստ միջոցներ ձեռք պիտի առնուին. որ և է խռովութեան առաջին առնելու համար:

— Լապորի առաջարկած էր ճիւղարձքայէնը և Բանիցարտին, Գերմանական և Իտալական Բա- րիլի գեղարանատանց նախկին զինտնորական կորդները, վկա- յութեան հրաւիրել, կամ թէ ի- րենց երկրին մէջ հարցուփորձեց Տրէյֆուսի յանցանքի մասին: Լապորիի այդ առաջարկը մեր- ժուեցաւ:

— Սուլթանը Գարատաղի իշ- խանին լաւ ընդունելէն յետոյ կըսեն թէ անոր նուիրեր է Պոս- նագ-Հէրոնէքը: Խեղճ Սուլթան: Աստուրիային միացած երկիրնե- րով կայսերական նուէր կընէ:

— Սերպիոյ նշանաւոր քաղա- քական գործիչներէն մին, Բիս- տիչ վախճանած է. Թագու մը պիտի կատարուի պետական հաշ- տով:

— «Թայմզ»-ի Պերլինի թղթա- կիցը կը հարցուէ թէ՛ շատ հա- ւանական է որ Սուլթանը իր հա- մաձայնութիւնը «այ Անգլիական ծրագրին, ի նկատի առնելով միայն քաղաքական շահերը: Սուլթանը այժմէն իսկ կաշխատի վերահաստատել իր բարեկամու- թիւնը Անգլիոյ հետ: Վերջապէս Սուլթանի առաջին նպատակը ըլլալով հաւասարակշռութիւն պահպանել իր արտաքին յարա- բերութիւններու մէջ, չի ուզեր որ երկաթուղիներու ամբողջ ցանցը ընկերութեան մը ձեռք անցնի:

— Պարսից արտաքին գործոց նախարար Մոհսին խանի մահ- ուան պատճառաւ Պարսից նախա- րարութեան մէջ մեծ փոփոխու- թիւններ տեղի ունեցած են:

Արտաքին գործոց նախարար նշանակուած է Միրզա Նասրու- լահ խան, որը թէեւ Եւրոպական կրթութիւն չունի, բայց համա- կիր է Եւրոպական լուսաւորու- թեան. իրեն օգնական նշանակ- ուած է իր որդին, որ Ռուսական համալսարանի ընթացաւարտ ի- րաւագէտ է:

— Մակեդոնական բարձրագոյն գումիթէն մեղի զրկած է ընդհա- նուր տեղեկագիր մը, Գոմանովի եկեղեցոյ խնդրոյն մասին, որ կը ճատելով մենք կը հարցուէնք: Այդ եկեղեցոյ վրայօք Սեր- պերն ու Պուլկարները, Մակե- դոնիոյ մէջ, շարունակ կուր ու-

նէին: Վերջ ի վերջոյ Սուլթանը իրատեղով մը եկեղեցին հաստա- տած էր Պուլկարներու վրայ:

Ինչ մը վերջը Սուլթանը իր ու- ռոշումը կը փոխէ յօգուտ Աեր- պերուն և կատիպէ որ պուլկար- ները եկեղեցին իր գերեզմա- տունով և շրջակայ հողերով միա- սին յանձնեն Սերպերուն:

Գոմանովի պուլկարները շատ կը յուզուին և զօրեղ ցոյց մը կընեն թէ տեղական իշխանու- թեան դէմ, և թէ Սերպերու վա- լիին դէմ:

— Ընդհանուր քուէարկութեան համար Պրիւքսէլի մէջ մեծ մի- թիւնը մը կայացեր է: Պրիւքսէլի ընկերակարական զաշնակցութիւ- նը, գործաւորական գլխաւոր խորհրդին հետ միասին մաս- նակցեր են այդ միթիւնիկը կաղ- մակերպելուն:

Ռամկավարական կուսակցու- թեան պետերէն շատերը ճառեր են, որոնցմէ, Պ. Սթեբա հրաւ- րած է ժողովուրդը. իր իրա- ւունքները ուժով պաշտպանել, եթէ կառավարութիւնը չը հա- մաձայնի բաւականութիւն տալ ժողովրդի պահանջներուն: Ընդ- հանուր քուէարկութիւնը հաս- տատելուն: Իսկ ընկերակարական Վանտէրվէլա իր ճառը վերջա- ցուցած է այս խօսքերով. «Այ մէկ բան, նոյնիսկ զինտնորական գնտերը չի պիտի կրնան արդի- լելու մեր յայտնութեանը: Հա- սարակական կարծիքն է աշ- խարհի թողաւորը»:

ՆԱՄԱԿ ԱՍՏՈՒՓ

Ուսթր. Յ. Բ. — 38 ֆրք. 80 սեն- թը ստացանք:

— Սօֆիա, Տ. — Ձեր յեղափոխա- կան նիւթերը չենք կրնար հրատա- րակել, որովհետեւ չէք մշակեր. իսկ եթէ մենք մշակենք, գուցէ փո- խուի, աւելի լաւ է նորէն՝ մշակե- ցէք:

Ա. Զ. Դ.

Տոպրիչի աղջկանց վարժարանին համար կուզուի վարժուէի մը որ կա- րողանայ աւանգել հայերէն լեզուի հետ և երկրորդական ուսումներ ու ձեռագործ գոյացուցիչ ամսականով: Փափագողները դիմեն հոգարարու- թեան նամակով:

Арменско училищно настоятелство
гр. Добрич

Ս. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ
ԿՕՇԿԱԿԱՐ
Մուսաղա, բաղնիք փողոց,
Համի Հասանի օրինակ

Ճաշակաւոր, տոկուն և ձեւաւոր կօշիկ չինել տալ ուղողը պէտք է զիմէ Պ. Ստեփան Խորասանճեանի, որուն ճարտարութիւնը մէկ փորձով երեւան կիլլայ:

Գիները խիստ գիւրամաշելի:

Печатница „Взаимность“ Варна